

Ավետիսյանների սպանության գործով նոր միջնորդություններ կներկայացվեն

2016 թ. հուլիսի 12-ին դատարանը մերժեց դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը

Ավետիսյանների իրավահաջորդները գանգատ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ընդդեմ Ռուսաստանի Դաշնության

Ավետիսյանների ընտանիքի սպանության գործով քսանմեկերորդ դատական նիստի մասին

2016 թվականի հուլիսի 29-ին կայացավ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի հերթական արտագնա դատական նիստը՝ Ավետիսյանների ընտանիքի սպանության գործով:

Այս դատական նիստին ամբաստանյալ Վալերի Պերմյակովի պաշտպան Էդուարդ Աղաջանյանը միջնորդություն ներկայացրեց իր պաշտպանյալի առաջին հարցաքննությամբ ձեռք բերված ապացույցները անթույլատրելի համարելու վերաբերյալ՝ այն հիմնավորելով նրանով, որ այդ հարցաքննության ժամանակ հայկական կողմից պաշտպան հրավիրելը օրենքով թույլատրված չի եղել:

Միջնորդությանը միացան նաև տուժողների իրավահաջորդներն ու նրանց ներկայացուցիչները:

Դատավոր Հարություն Մովսեսյանը նախ որոշեց միջնորդությունն ավելի ուշ քննարկել, սակայն փաստաբանները պնդեցին, որ միջնորդության քննարկումը կարևոր է դատական ներկա փուլում, ինչից հետո որոշում կայացվեց դատական նիստը հետաձգելու մասին:

Միջնորդությունը կքննարկվի հաջորդ դատական նիստի ընթացքում:

Տուժողի իրավահաջորդների ներկայացուցիչ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Ա. Սաքունցի կողմից հաջորդ դատական նիստին կներկայացվի ևս երկու միջնորդություն:

Հաջորդ դատական նիստը նշանակված է 2016 թ. օգոստոսի 5-ին՝ ժամը 12:00-ին:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ • Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001,
Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ hcav@hcav.am • WWW.HCAV.AM